

եւս մահմետականացած են: Առնունք դար-
ձեալ իրր օրինակ արեւմտեան հարաւային
լեռնակողմը, ուր հայ զիւղէրու շարք մը
կայ: Ամէնէն բարձրագիրը Նորշէն հայ-կթղ.
մեծ զիւղ մըն է. բայց անդին Խաչուս,
ասդին Մէղուս եւն մահմետական եղած
են: Գոնէ խառն բնակչու թեամբ է Վախիւն-
իանս. մահմետական եղած են ասդին եւ
անդին պատմական զիւղիւս՝ Գեղէի իւր
բերդով (Կ. Kegik) եւ Վարդաշէն (այժմ
Վարդշէն եւ Վարչէն, Կ. Vartshin), ուր
բանակած էին Հազարաւուխտի պարսիկ
զնդերն, երբ «երթեալ յՈսան» (= Թոր-
թում) կը հարածէին զՎահան Մամիկո-
նեան. (Ղազ. Փարպեցի, ՀԹ): Մահմե-
տական եղած է Զեռակս զիւղը, ուսկից
էր Ղեռնդեանց դասէն «երանելին Արրա-
համ երէց» (Փարպ. ծԳ, Կ. «Zinager»,
այժմ «Զինակիր» եւ նաեւ «Զինաւոր»),
թէ եւ այս միեւնոյն հովտին շարունակու-
թեան մէջ քրիստոնեայ մնացած են Գարն-
կոց («Բարնկոս», Կ. Karangots), Խոչ-
Էրէի (Կ. «Chosprik», հին Խոչէրէի)
եւն: Մահմետական է այժմ Սաղէր, բայց
զիմացի Ռապարձ՝ հայ-կթղ.: Այսպէս
ամէն կողմ այս հին աշխարհիս մէջ, զիւ-